

Ախտահանում

Ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման համար շատ կարևոր է, որ Ձեր տնտեսությունում իրականացնեք ախտահանություններ, որոնք, կախված իրավիճակից և տնտեսության կամ համայնքի անապահովության աստիճանից, լինում են պրոֆիլակտիկ և հարկադիր, իսկ ըստ կատարողականության՝ ընթացիկ և եզրափակիչ:

Պրոֆիլակտիկ ախտահանությունը կատարում են տարեկան 2 անգամ. առաջին անգամ՝ կենդանիներին արոտ հանելուց առաջ և երկրորդ անգամ՝ մսուրային շրջանից առաջ: Պրոֆիլակտիկ ախտահանություն կատարում են նաև կենդանիների զանգվածային վակցինացումների, ախտորոշիչ միջոցառումների ժամանակ, արյուն վերցնելիս, սպանդից հետո մորթի հրապարակներում և այլ դեպքերում:

Հարկադիր ախտահանությունը կատարում են այն ժամանակ, երբ տնտեսությունը կամ համայնքը անապահով է որևէ ինֆեկցիոն հիվանդության նկատմամբ: Հարկադիր ախտահանության միջոցով Դուք կկանխեք ինֆեկցիայի հարուցչի հետագա տարածումը:

Ընթացիկ ախտահանությունը կատարում են պարբերաբար, մինչև կարանտինի կամ սահմանափակման ժամկետի վերջը:

Եզրափակիչ ախտահանությունը կիրառվում է կարանտինը կամ սահմանափակումը հանելուց առաջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ֆերմայում պրոֆիլակտիկ, հարկադիր, ընթացիկ կամ եզրափակիչ ախտահանություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ ախտահանողը լինի համապատասխան արտահագուստով:

Ախտահանությունն իր մեջ ներառում է մի քանի փուլ: Նախ կատարում են անասնագույնի մեխանիկական մաքրում, ջրի շիթով հատակի և պատերի լվացում: Դրանից հետո փակում են բոլոր պատուհաններն ու դռները ու նոր անցկացնում քիմ. նյութերով ախտահանություն: Կիրառում են տարբեր նյութեր՝ քլորոֆորմ, ֆորմալին, կաուստիկ սոդա, վիրկոն “S” և այլն: Ախտահանության 3-րդ օրը նոր պետքե բացել անասնագույնի դռներն ու պատուհանները, որ օդափոխվի շենքը: Այսքանից հետո կիրով սպիտակեցնում են պատերը, թողնում չորանա ու նոր բերում կենդանիներին: Անասնաշենքի ախտահանությունից հետո կարելի է կատարել հակապարազիտային միջոցառում նեոցիդով: Այսպիսով, միջոցառումը կլինի արդյունավետ և կտնտեսեք ժամանակ: Կենդանիներին անասնաշենք թողեք միայն հաջորդ օրը: